Լեռ Կամսար

Ազգային նոթեր

Մեր կառավարությունը այս օրերս պատվիրակություն մը ղրկեց Եվրոպա՝ հայկական վեց վիլայեթները խնդրելու համար: Գնացողները բոլորն ալ ռուսահայեր են և պիտի թյուրքահայերու համար երկիր խնդրեն:

Երեկ կնիկս ղրկեցի հացի «կնիժկան» փոխելու, չէին տվեր, ըսեր էին «գնա՛, թող մարդդ գա, «կնիժկան» մարդուդ անունովն է»: Ու այսօր չորս ու կես ժամ հերթ եմ պահեր գրասենյակին դռանը, ետևս ունենալով կամարլեցի այրի մը ու առաջիս տասներկու տարեկան մանչ մը:

Արդ, այն կառավարությունը, որուն պաշտոնյաները մեկ ֆնտանոց հացի չեկ անգամ չեն վստահեր մեկի մը, որ «կնիժկային» տիրոջ կնիկն է, որ ըստ եկեղեցու «երկոքյան մարմին մի» են, կըսեմ. այդ կառավարությանը ինտո՞ր թույլ կուտա իրեն երթալ Եվրոպա և ուրիշի անունով վեց վիլայեթ խնդրել: Պիտի ըսե՛ն՝ «թյուրքահայերը անոնց եղբայրներեն են»: Ճշմարիտ է, այո՛, սակայն ինչքան ալ եղբայր ըլլան, ամուսիններու պես կապված չեն իրար: Եղբայրներ մեծնալիս կկռվին իրար հետ, կծեծեն զիրար: Կամ թե, եթե իրոք եղբայր են, ի՞նչ արգելք կա, որ երկու եղբայրներ իրարու ձեռք բռնած Եվրոպա երթան: Եթե ռուսահայերը կառարկեն, թե տաճկահայ եղբայրները ներկայանալի արտաքին մը չունին, կամ լեզու չեն գիտեր, ավելի աղեկ, թող եվրոպացիք անոնց խեղճ վիճակը տեսնեն ու շատ կարելի է, վից վիլայեթի տեղը յոթը կուտան:

Չէ, խնդիրը սկզբունքն է:

Կամ պետք է ով որ «կնիժկա» տանի՝ փոխեն, կամ եթե չեն փոխեր, պետք չէ ուրիշի անունով Եվրոպա երթան ու վեց վիլայեթ խնդրեն:

Ես այսպես գիտեմ:

1919թ.